

1715 Սեպտ. 10. — Կոլոտ Ադրիանուպոլիս կ'երթայ հայ երեւելիներու հետ եւ վիճակին Առաջնորդ ծերունի Աբրահամ վարդապետին հետ կ'աշխատին եւ երկու պատրիարքութիւններու բաժանումը հաստատել կու տան արքունի հրովարտականքով:

1716. — Վերագարծ Ադրիանուպոլէն եւ ժողով Մայր Եկեղեցւոյ մէջ: — Եղած կարգադրութիւններ կը տեղեկագրուին Էջմիածին Աստուածատուր Կաթողիկոսին:

1716. — Հրաւեր Գրիգոր վրդ. ի՝ Երուսաղէմի պատրիարքութեան:

1717 Օգոստ. 18. — Վերափոխման Տօնին օրը՝ Գրիգոր վրդ. Պոլիս կը մտնէ: (— Ս. Կարապետի Առաջնորդ կը կարգուի Աբրահամ վրդ.: Պէտք չէ շփոթել Էտիրնէի Առաջնորդին հետ —):

Սեբաստացի Մխիթար վրդ. 1717 Սեպտ. 8 Աստուածածնի Ծննդեան տօնին՝ Վենետիկի Ս. Ղազար կղզեկին մէջ պաշտօնապէս կը հաստատէ իր Միաբանութիւնը:

1718. — Կոլոտ եւ Գրիգոր հանգանակութեան կը սկսին՝ Երուսաղէմի պարտքը վճարելու համար: Գրիգոր վրդ. Շղթայն կը կախէ իր վեղէն:

1718 Յուլիս 6. — Մեծ հրդեհ. Մայր Եկեղեցին կ'այրի: Կոլոտի եւ Շղթայակրի ջանքով կը շինուի 70 օրւան մէջ 1719ին:

1719. — Կոլոտ արքունի հրովարտակ կը հանէ՝ Լատինաց եւ Յունաց հետ Հայոց բաժինն ալ նորոգելու Երուսաղէմի Ս. Յարութիւն Տաճարին մէջ:

1719 Յունիս 23 — Կէտիկ փաշայի հրդեհը: Մայր Եկեղեցւոյ այրումը: Կոլոտ նոյն տարին վերաշինութեան հրամանը կը հանէ եւ գործի կը ձեռնարկէ: